

Հակառակ բոլոր դասակարգային եւ աշխարհաքաղաքացիական (կոսմոպոլիտական) թէնորիներուն (վարդապետութիւններուն), ազդութիւնը ամէնազօրաւոր եւ յաղթական ազդակն է մարդկութեան ժամանակակից պատմութեան մէջ: Կը քայքայուին հսկայ կայսրութիւններ, կը տկարանան մեծ կրօնական համայնքներ, տեղի կ'ունենան պառակտիչ դասակարգային պայքարներ յանուն համաշխարհային նպատակներու, — եւ սակայն ազդութիւնը ոչ միայն չի տկարանար ու քայքայուիր, այլ, ընդհակառակը, հետզհետէ կ'աճի, կը զարգանայ, կ'ինքնամփոփուի եւ կը դառնայ ամենէն կենսունակ ու ստեղծագործ շարժիչ ուժը քաղաքական կեանքի մէջ:

Անհատի ազատութեան հետ զուգընթաց՝ մարդկութիւնը կ'ենթարկուի պարզորոշ բնութեզգայն մը, տարրալուծուելով ըստ ազդութեանց:

Ամբողջ աշխարհը կ'ապրի այսօր պատմական հզօր պրոցես մը, որու միջոցով բոլոր ազդութիւնները անդիմադրելի թափով մը կը մղուին դէպի քաղաքական անկախ գոյութիւն:

Քաղաք-պետութիւնները, ինչպէս նաեւ կրօնական, աշխարհակալական հիմեր ունեցող պետութիւնները կը քայքայուին եւ տեղի կուտան միտարար ազգային պետութեանց:

Մէկ կողմէն՝ պետութիւնները կը դառնան ազդութիւններ, եւ միւս կողմէն, ազդութիւնները կը դառնան պետութիւններ:

Չարդացման երկու ճամբաներն ալ կը բերեն դէպի ազդութեան պետական ինքնամփոփումը, կազմակերպումը եւ մարմնաւորումը:

XI

ՌԱՄԿԱՎԱՐՈՒԹԻԻՆԸ

ԵՒ ԱԶԳԵՐՈՒ ԶԱՐԹՕՆՔԸ

Համամարդկային պատմութեան մէջ ազդութեանց, եթէ կարելի է այսպէս ըսել, պետականացումը կամ պետութեանց ազգայնացումը իսկապէս նոր երեւոյթ է, մանաւանդ նոր է, իբրեւ համատարած երեւոյթ:

Ազդերու ազատագրական պայքարը ծայր է տուած 19-րդ դարու մէջ միայն, Քրանսական մեծ յեղափոխութենէն յետոյ:

Որքան ատեն որ ժողովրդական հսկայ զանգուածները կ'ապրէին ստրկական կամ ճորտային վիճակի մէջ, որ կը պահէր զանոնք անբան ու իրաւագուրկ անասուններու մակարդակին վրայ, ազդութեանց զարգացման ճանապարհները փակուած էին: Իտալական վերածնունդը (ռէնէսսանս), գերման վերանորոգչական շարժումը (ռէֆորմասիոնը), անգլիական եւ ապա Քրանսական յեղափոխութիւնը, ինչպէս նաեւ ամերիկեան ազատագրութիւնը, աստիճանաբար ժողովուրդներու մէջ պատրաստեցին այն հողը, որու վրայ միայն կրնար ծայր տալ եւ յաջողութեամբ ծաւալուել ազգային ազատագրական շարժումը:

Մէկ կողմէն այդ հողը պատրաստեցին այն յեղափոխական ազատարար զաղափարները, որոնք այնքան խոտացած, պերճախօս, ցնցող ու վարակիչ կերպով ձեւակերպուեցան Քրանսական մեծ յեղափոխութեան միջոցով եւ տարածուեցան ամբողջ աշխարհի մէջ: Միւս կողմէն՝ քաղաքական, տնտեսական եւ ընկերային այն մեծ վերիվայրումները, զորս առաջ բերաւ ամէն տեղ կապիտալիստական խոշոր տնտեսութիւնը ուղղակի կամ անուղղակի կերպով:

Խղճի ազատութիւն, մասնաւոր սեփականութեան անձեռնմխելիութիւն, հաւասարութիւն օրէնքի առջեւ, ժողովուրդի վեհապետութեան դադափար, անհատի ազատութիւն եւ աւատական կապանքներու վերացում, քաղաքացիական իրաւունքներ եւ այլն, — այս բոլոր դադափարները, կապիտալիստական տնտեսութեան յարուցած պահանջներու հետ միասին, տարերայնօրէն կը մղէին ժողովուրդները դէպի ռամկավարութիւն, դէպի դեմոկրատիա, դէպի ռամկավարութեան, դեմոկրատիայի յաղթանակ: Իսկ դեմոկրատական դադափարներու ազդեցութեան տակ եւ ռամկավարական շարժման ծաւալման հետ մէկտեղ անխուսափելիօրէն կ'արթննար ժողովրդական զանգուածներու մէջ ազգային միտքը, կը զարբնուիր անոնց մէջ ազգային ազատագրութեան կամքը եւ աննկատելի կերպով դեմոկրատիան կը նոյնանար ազդութեան հետ:

Չափազանցութիւն չէ, եթէ ըսենք, թէ առանց դեմոկրատիայի եւ դեմոկրատական